

«ԱՐԳԵԼՈՑԱՊԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ»
ՊՈԱԿ

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ
ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

reserveparksnco@env.am

(010) 688204

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի Գիտության բաժնի կողմից 2024թ-ի
1-ին եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքների ամփոփ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում շարունակվում են գիտական աշխատանքները:

Գիտության բաժինը տարիներ շարունակ համագործակցում է ՀՀ կրթության և գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տարբեր ուսումնական հաստատությունների հետ՝ Երևանի պետական համալսարանի, Հայաստանի ազգային ազգարային համալսարանի և Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի, «Մխիթար Սեբաստացի», «Դեղին Արտույտ», «Հուսո տուն» կրթահամալիրների ինչպես նաև Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի և Երևանի Շառլ Ազնավուրի անվան քոլեջի հետ:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող «Զրվեժ» անտառապարկում «Մխիթար Սեբաստացի», «Հայ Ասպետ» և «Արեգնազան» կրթահամալիրների, Լեռնամանիա արշավական ակումբի, Անանիա Շիրակացու անվան ճեմարանի, Երևանի թիվ 135 դպրոցի, «Դեղին Արտույտ» մանկապարտեզի և այլ ուսումնական հաստատությունների սաների հետ Կազմակերպության գիտաաշխատողների կողմից իրականացվել են էկոկրթական, էկոդաստիարակչական շրջայցեր և կազմակերպվել են ձմեռային խաղեր:

Սոցիալական ցանցերի միջոցով կատարվել է իրազեկումներ Կազմակերպության ենթակայության տակ գտնվող տարածքներում ամենօրյա կատարված աշխատանքների վերաբերյալ:

«Վայրի բնության միջազգային օրվա» կապակցությամբ Կազմակերպության գիտության բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել է միջոցառում Կոտայքի մարզի Ձորաղբյուրի Վ. Կարապետյանի անվան միջն. դպրոցի աշակերտների համար: Միջոցառման շրջանակներում քննարկվել է օրվա կարևորության և Կազմակերպության ենթակայության տակ գտնվող տարածքների վայրի բուսականության, և էնդեմիկ միջատ հանդիսացող Արարատյան որդան կարմիրի -*Porphyrphora hammelii* Brandt մասին:

Անտառների միջազգային օրվա կապակցությամբ նկարահանվել և հրատարակվել է տեսահոլովակ «Զրվեժ» անտառպարկի և Բերդի «Սորաններ» դենդրոպարկի հիմնադիր Հրանտ Ավագյանի կյանքի և գործունեության մասին:


Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող «Զրվեժ» անտառպարկում այս եռամսյակում ունեցել ենք թվով 8701 այցելու:

«Էրեբունի» պետական արգելոց


Արգելոցում և հարակից տարածքներում տարածված հազվագյուտ և անհետացող, ՀՀ «Կարմիր գրքում» գրանցված տեսակների գիտական ուսումնասիրությունների և մոնիթորինգի իրականացման շրջանակներում կատարվել են նախորդ տարիների ընթացքում հավաքված նյութերի ուսումնասիրություն, որի արդյունքերով 292 տեսակների հերքարիումների շուրջ 25 տեսակներ հավաքվել մշակվել և փոխարինվել են: ՀՀ «Կարմիր գրքում» գրանցված որոշ տեսակների աճելավայրերը տեղադրվել են քարտեզների վրա՝ մոնիթորինգի հետագա աշխատանքները արդյունավետ դարձնելու համար (քարտեզները կցվում են)՝ Յորեն արարատյան-*Triticum araraticum* Jakubz, Յորեն ուրարտու – *Triticum urartu* Tumanian ex Gandilyan, Յորեն բեոտական – *Triticum boeoticum* Boiss, Գազ բժավոր – *Astragalus striatellus* Pall. Ex Bieb, Հիրիկ նրբագեղ – *Iris elegantissima* Sons, Տերեփուկ երևանյան – *Centaurea erivanensis* (Lipsky) Bordz, Այծակն ցգամազ – *Aegops taushii* Coss, Կաթնուկ Թախտաջանի – *Lactuca takhtadzhiani* Sosn, Ճարճատուկ գեղձավոր – *Cicorium glandulosum* Boiss et Huet, Հիրիկ ցանցավոր – *Iris reticulata* M. Bieb:

2024 թվականի գիտարշավի ընթացքում, իրազեկման նպատակով նախատեսվում է նկարահանել տեսահոլովակ, ինչպես նաև լուսանկարներ տեղեկատվական պաստառների և ցուցանակների պատրաստման նպատակով:



Astragalus striatellus
Pall. ex Bieb - Չազ
գծավոր
Հայաստանի համար
ներ տեսակ





**Centaurea
erivanensis (Lipsky)
Bordz-Sterekhով
Երևանյան**





Triticum araraticum
Երկուս-Յորտն
արարատյան




Triticum urartu
Tumanian ex Gandilyan-
Տոբե՛ն ուրարտու




Aegops tauschii Coss-
Այծապին ցգաճաղ




Կաթնուկ
Թախտազյանիի
Lactuca takhtadzhianii
Sosn



Triticum boeoticum
Boiss-Յորեն
բերրակալան




Iris elegantissima Sons-
Հիրիկ նրբագեղ






Ճարճատուկ
գեղձավոր
Cichorium glandulosum
Boiss. et Huet



Հիմնի ցանցապլան
Iris reticulata M. Bieb



«Որդան կարմիր» պետական արգելավայր

Իրականացվել է ֆլորայի և բուսականության ուսումնասիրություն, կատարվել են մոնիթորինգի աշխատանքներ՝ նախկինում հրդեհված տարածքներում, որդանախտոտի աճի և զարգացման վերաբերյալ: Արգելավայրի տարածքից հավաքված նյութերի հիման վրա կատարվում են ցուցակների ճշգրտում և վնասված հերբարիումների թարմացում:

«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայր

Արգելավայրի ֆլորայի ուսումնասիրության միջոցառման շրջանակներում իրականացվում են հավաքված նյութերի ուսումնասիրություն: Արգելավայրից նախորդ տարի հավաքված բուսատեսակները ճշտվել են: Կատարվում են ուսումնասիրություններ արգելավայրի տարածքից հավաքված բուսատեսակների և նրանց աճելավայրերի, որպեսզի դաշտային աշխատանքները ավելի արդյունավետ իրականացվեն: Կատարված ուսումնասիրությունների և հավաքված բուսատեսակների հիման վրա կազմվել են արգելավայրի ֆլորայի բուսատեսակների ցուցակները՝ խոտաբույսերի և ծառաթփատեսակների տեսակային կազմի ցուցակները առանձին-առանձին: Ըստ ճշտված տվյալների խոտաբույսերի տեսակային կազմը բաղկացած է 170 տեսակներից, որոնք պատականում են 36 ընտանիքի, իսկ ծառաթփատեսակներինը բաղկացած է 36 տեսակներից, որոնք պատկանում են 12 ընտանիքի: Մեր կատարած ուսումնասիրությունների արդյունքով արգելավայրի ֆլորայի տեսակային կազմը ընդհանուր առմամբ կազմում է 207 տեսակ: ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակները 5 են՝ *Rhododendron caucasicum* Pall. – Մրտավարդ կովկասյան, *Lilium armenum* (Miscz. Ex Gross) Mande. – Շուշան հայկական, *Orchis mascula* L.- Խոլորձ արական, *Plantanthera chlorantha* – Թիթեռնիկախոլորձ կանաչաձաղիկ, *Papavera orientale* L.- Կակաչ արևելյան: Նախատեսվում է կատարել «Կարմիր գրքում» գրանցված տեսակների աճելավայրերի ճշտում և գրանցում: (Ցուցակները կցվում են):

**«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի ծառաթփատեսակների
կազմը
2023 թվականի տվյալները**

N	Ծառաթփատեսակները ըստ ընտանիքների (լատիներեն-հայերեն)	Կենսաձև
	1.Angiospermae –Ծածկասերմեր	
	Berberidaceae –Կծոխուրազգիներ	
1.	Berberis orientalis C. K. Schneid –Կծոխուր արևելյան կամ Ծորենի արևելյան	ՏԹ
	2.Betulaceae – Կեչազգիներ	
2.	Betula litwinowii A. Doluch.– Կեչի Լիտվինովի	ՏԾ
3.	Betula pubescens Ehrh. – Կեչի թավոտ	ՏԾ
4.	Betula pendula Roth. – Կեչի կախվող (լացող)	ՏԾ
5.	Carpinus betulusL. – Բոխի սովորական	ՏԹ
	3.Caprifoliaceae – Ցախակեռասազգիներ	
6.	Lonicera caucasica Pall.–Ցախակեռաս կովկասյան	ՏԹ
7.	Viburnum lantana L.– Բռնչի գերիմաստի	ՏԹ
	4.Ericaceae - Հավամրգազգիներ	
8.	Rhododendron caucasicum Pall. - Մրտավարդ կովկասյան	ՏԹ
9.	Vaccinium myrtillus L. – Հապալասենի մրտենական	
	5.Fagaceae – Հաճարազգի	
10.	Quercus macranthera Fisch.et.C.A.Mey.ex Hohen –Կաղնի արևելյան կամ խոշորառէջ	ՏԾ
	6.Oleaceae –Զիրթնազգիներ	
11.	Fraxinus excelsior L. – Հացենի սովորական	ՏԾ
	7.Pinaceae - Սոճազգիներ	
12.	Pinus kochiana - Սոճի կոխի	ՄԾ
	8.Rhamnaceae – Դժնիկազգիներ	
13.	Rhamnus cathartica L.– Դժնիկ լուծողական	ՏԹ
	9.Rosaceae – Վարդազգիներ	
14.	Cerasus mahaleb (L.) Mill. – Բալենի մահալեբյան	ՏԹ
15.	Malus orientalis Uglitzkich – Խնձորենի արևելյան	ՏԾ
16.	Padus racemosa (Lam.) Gilib.(=P. avium Mill.) – Թխենի սովորական	ՏԾ
17.	Pyrus communis ssp.caucasica (Fed.) Browicz – Տանձենի անտառային կամ կովկասյան	ՏԾ
18.	Ribes rubrum L. - Հաղարջենի կարմիր	ՏԹ
19.	Rosa canina L.(glaucous dog rose) – Մասրենի սովորական	ՏԹ
20.	Rosa sosnovskyana – Մասրենի սոսնովսկու	ՏԹ
21.	Rosa spinosissimaL.– Մասրենի առատափուլ	ՏԹ
22.	Rubus idaeus L. – Մոռենի սովորական	ՏԹ

23.	<i>Prunus divaricate</i> Lebed.(= <i>P.cerasifera</i>) – Սալորենի սովորական	ՏԹ
24.	<i>Crataegus caucasica</i> K.Koch. – Սզնի կովկասյան	ՏԹ
25.	<i>Sorbus aucuparia</i> L. – Արոսենի սովորական	ՏԹ
26.	<i>Sorbus kuznetzovii</i> Zinserl. – Արոսենի կուզնեցովի	ՏԹ
27.	<i>Spiraea hypericifolia</i> L. – Ասպիրակ սրոհունդատերես	ՏԹ
10.Salicaceae – Ուռենազգիներ		
28.	<i>Populus tremula</i> L. – Բարդի անտառային կամ կաղամախի	ՏԾ
29.	<i>Salix viminalis</i> L. – Ուռենի ճիպոտանման (կողովի)	ՏԹ
30.	<i>Salix alba</i> L. – Ուռենի սպիտակ	ՏԾ
31.	<i>Salix pentandroides</i> Skvortz. – Ուռենի հնգառէջ	ՏԹ
32.	<i>Salix caprea</i> L. – Այծուռի	ՏԾ
33.	<i>Salix pseudomedemii</i> E.Wolf – Ուռենի կեղծ Մեդեմի	ՏԾ/ՏԹ
11.Tiliaceae – Լորենազգիներ		
34.	<i>Tilia caucasica</i> Rupr (= <i>T. begoniifolia</i> Stev.) – Լորենի կովկասյան (լ.բեգոնիատես)	ՏԾ
35.	<i>Tilia cordata</i> Mill. – Լորենի մանրատերև	ՏԾ
12.Ulmaceae – Թեղազգիներ		
36.	<i>Ulmus glabra</i> Huds.(= <i>U. elliptica</i> K. Koch) – Թեղի էլիպսաձև	ՏԾ

«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի ֆլորայի կազմը

2023 թվականի տվյալները

NN	
1.Apiaceae - Հովանոցավորներ	
1.	<i>Astrantia maxima</i> - Աստաղաբույս ամենամեծ
2.	<i>Falcaria vulgaris</i> - Սիբեխ սովորական
3.	<i>Ferula orientalis</i> L. – Նարդեն արևելյան
4.	<i>Carum caasicum</i> Boiss. – Քեմոն կովկասյան
5.	<i>Carum carve</i> - Քեմոն սովորական
6.	<i>Chamaescidium acaule</i> (Bieb.) Boiss. - Հովանոցավոր անցողուն
7.	<i>Chaerophyllum aureum</i> - Շուշանբանջար ոսկեզոծ
8.	<i>Pimpinella confuse</i> Woronow - Անիսոն խառը
9.	<i>P. saxifrage</i> L. – Անիսոն քարաբեկ
10.	<i>Seseli montanum</i> L. – Կապնդեղ լեռնային
2. Asteraceae - Բարդածաղկավորներ	
11.	<i>Achillea millefolium</i> - Հազարատերևուկ (բյուրատերևուկ) սովորական
12.	<i>Anthemis arvensis</i> L. – Անթեմ դաշտային
13.	<i>Artemisia absinthium</i> L. - Օշինդր դառը

14.	Aster alpinus L.- Աստղածաղիկ ալպիական
15.	Bidens tripartitus - Կատվալեզու եռաբաժան
16.	Centaurea fischeri Willd. – Տերեփուկ Ֆիշերի
17.	C. montana – Տերեփուկ լեռնային
18.	C. atropurpurea – Տերեփուկ ալկարմիր
19.	Chardinia orientalis – Շարդինիա արևելյան
20.	Cirsium obvallatum (Bieb.) DC. – Գեղավեր, տատասկ պարուրված
21.	C. rhizocephalum C.A.Mey. – Գեղավեր արմատագլխանի
22.	Cichorium intybus – Ճարճատուկ սովորական
23.	Crepis capillaris – Զամբյուղախոտ մազմզուկներով
24.	Doronicum oblongifolium DC. – Դարունան երկարավուն
25.	Echinops sphaerocephalus - Ոգնագլխիկ գնդագլխկավոր
26.	Erigeron venustus Botsch. – Գարնանաթարամ գեղեցիկ
27.	Gnaphalium supinum L. – Ականջարուրդ կծկված
28.	Hieracium cymosum L. – Ճուռակախոտ հովանոցանման
29.	H. caespitosa – Ճուռակախոտ տորֆային
30.	Inula glandulosa Willd. – Կղմուղ գեղձավոր
31.	I. helenium - Կղմուղ բարձր
32.	I. subacaulis Fisch. Et C.A. Mey – Կղմուղ կարճացողուն
33.	Scorzonera meyeri (C.Koch) Lipsch – Խինձ Մեյերի
34.	S. seidlitzii Boiss.- Խինձ Սեյդիլի
35.	Senecio aurantiacus DC. – Հալսորուկ նարնջագույն
36.	Matricaria matricarioides - Երիցուկ երիցուկանման
37.	Taraxacum fulvum – Խատուտիկ կարմրադեղնավուն
38.	T. stevenii (Spr.) DC – Երիցուկ Ստեվենի
39.	T. officinalis - Խատուտիկ դեղատու
40.	Tanacetum purpureum - Տարկավան մուգ կարմիր
41.	Tragopogon reticulatus Boiss. Et Huet – Սինձ ցանցավոր
42.	T. graminifolius DC. – Սինձ հացահատիկատերև
43.	Tripleurospermum sp – Եռակողմասերմիկ
44.	Telekia speciosa - Եզնակն գեղեցիկ
45.	Onopordon acanthium L- Կառ փշոտ (Կառ)
	3. Apocynaceae - Շնամեռուկազգիներ
46.	Vinca herbacea - Կուսածաղիկ խոտային
	4. Balsaminaceae - Զգայնուկազգիներ
47.	Impatiens nolitangere - Հինածաղիկ սովորական
	5. Brassicaceae - Խաչածաղկավորներ
48.	Alyssum tortuosum Willd. – Վառվուրուկ ոլորված
49.	Arabis brachycarpa Rupr. – Արաբախոտ կարճապտուղ
50.	Capsella bursa-pastoris - Հովվամախաղ սովորական (ծոսապաշար)
51.	Cardamine uliginosa Bieb. – Դաշտակոտեն ճահճային
52.	Coluteocarpus vesicaris (L.) Holboe - Ճթիկ ցանցապարկավոր
53.	Draba bruniifolia Stev. – Ճարտարուկ առատատերև
54.	D. siligiosa Bieb. – Ճարտարուկ պատիճավոր
55.	Isatis canescens DC. – Լրջուն գորշ
56.	Sisymbrium officinale – Աղբակոտեն դեղատու
	6. Boraginaceae - Գողտրիկազգիներ

57.	Echium vulgare - Իժախոտ սովորական
7. Campanulaceae - Չանգակազգիներ	
58.	Campanula aucheri DC. – Չանգակ Օշերի
59.	C. collina Bieb. – Չանգակ բլրակային
60.	C. stevenii Bieb. - Չանգակ Սոսենի
61.	C. trautvetteri Grossh. – Չանգակ Տրաուտվերի
62.	C. tridentate Schreb. – Չանգակ եռատամ
8. Caryophyllaceae - Մեխակազգիներ	
63.	Cerastium purpurascens Adams. – Ճոմոուկ մանուշակագույն
64.	Cypsophila tenuifolia Bieb. – Յմախ նեղատերև
65.	Dianthus cretaceous Adams – Մեխակ կավճային
66.	D. carthusianonum L. – Մեխակ կարթուրյան
67.	D. barbatus – Մեխակ մորուքավոր
68.	Minuartia caucasica (Adams) Mattf.- Մինուարցիա կովկասյան
69.	M.oreina (Mattf.) Schischk. – Մինուցարիա լեռնային
70.	Silene sp. – Ծվծվուկ
71.	S. nutars L. – Ծվծվուկ կախված
72.	S. vulgaris – Ծվծվուկ սովորական
9. Crassulaceae - Թանձրատերևազգիներ	
73.	Sedum annum L. – Թանթոնիկ մեկամյա
74.	S.pilosum Bieb. – Թանթոնիկ մազոտ
75.	S. teellum Bieb. – Թանթոնիկ բարակ
10. Cyperaceae - Բոշխազգիներ	
76.	Carex medwedewii Lesk.- Բոշխ Մեդվեդևի
77.	C.caucasica Stev. - Բոշխ կովկասյան
11. Dipsacaceae - Ականքազգիներ	
78.	Cephalaria gigantea (Ledeb.) Bobr.- Ջիվան հսկայական
79.	Scabiosa caucasica – Քոսքունկ կովկասյան
12. Euphorbiaceae – Իշակաթնուկազգիներ	
80.	Euphorbia vigata – Իշակաթնուկ ճյուղավորված
13. Fabaceae - Լոբազգիներ	
81.	Anthyllis vulneraria – Վիրախոտ խոցված
82.	A. variegata Soiss.- Վիրախոտ խայտաբղետ
83.	Astragalus incertus Ledeb. – Գազ անորաշ
84.	Coronilla varia L. – Քարառվույտ խայտաբղետ
85.	Genista transcaucasica – Օրոն անդրկովկասյան
86.	Hedysarum caucasicum Bieb. – Կուրկուրան կովկասյան
87.	Lathyrus cicero - Տափոլոռ վարդագույն
88.	Melilotus officinalis - Իշառվույտ դեղատու
89.	Oxytropis cyanea Bieb. – Գառնառվույտ կապույտ
90.	Trifolium medium – Երեքնուկ միջին
91.	T. ambiguum Bieb. – Երեքնուկ կասկածելի
92.	T. canscens Willd. - Երեքնուկ մոխրագույն
93.	T.pratense L. - Երեքնուկ մարգագետնյին
94.	T. trichophalum Bieb. – Երեքնուկ մազմզոտ
95.	Vicia sepium - Վիկ ցանկապատի
14. Gentianaceae - Բոգազգիներ	
96.	Gentiana caucasica Bieb. - Բոգ կովկասյան

97.	G. sp. – Բոզ
98.	G. septefida Pall. – Բոզ յոթնամաս
	15.Geraniaceae – Խորդենազգիներ
99.	Geranium ibericum Cav. – Խորդենի վրացական
100.	G. sanguineum – Խորդենի արնագույն
101.	G. pratensse L. – Խորդենի մարգագետնային
	16.Hypericaceae - Սրճուկազգիներ
102.	Hypericum perforatum - Սրճուկ խոցված
	17. Juncaceae - Կնյունազգիներ
103.	Luzula pseudosudetica V. Krecz. – Փայլուկ նեղատերև
104.	L. spicata (L.) DC. – Փայլուկ հասկիկավոր
	18. Lamiaceae - Շրթնազգիներ
105.	Betonica grandiflora Willd .- Թթվին խոշորածաղիկ
106.	Digitalis ferruginea - Մատնոցուկ ժանգոտ
107.	Salvia verticillata L. – Եղեսպակ շրջված
108.	S. glutinosa - Եղեսպակ կաշուն
109.	Scutellaria orientalis L. – Պնակախոտ արևելյան
110.	Stachys rubescens - Աբեղախոտ անտառային
111.	S. alpinia L. – Աբեղախոտ ալպիական
112.	Melissa officinalis L.- Պատրիջ դեղագործական
113.	Mentha longifolia - Դաղձ երկարատերև
114.	Origano vulgare - Խնկածաղիկ սովորական
	19.Liliaceae - Շուշանազգիներ
115.	Allium victorialis L.- Սոխ հաղթության
116.	Lilium armenum (Misch. Ex Gross) Mande. – Շուշան հայկական
117.	Ornithogalum transcaucasicum Miser. – Աստղաշուշան անդրկովկասյան
118.	Pushkinia scilloides - Պուշկինիա մկնաստիանման
119.	Veratrum album - Ջոք սպիտակ կամ կեղծ դանձլամեր
	20.Linaceae- Կտավատազգիներ
120.	Linum hypericifolium - Վուշ սրճուկաթերև
	21. Onagraceae -Ապուզանազգիներ
121.	Chamaenerium angustifolium Lam. – Նեղտերևի անգոստիֆոլում
	22.Orchidaceae - Խոլորձազգիներ
122.	Gymnadenia conopsea – Լերկաբշտիկ երկայնատեղջույր
123.	Orchis mascula L. – Խոլորձ արական
124.	Platanthera chlorantha – Թիթեռնիկախոլորձ կանաչածաղի
	23.Papaveraceae - Կակաչազգիներ
125.	Chelidonium majus -Կանթեղախոտ մեծ
126.	Papaver monanthum Trautv.- Կակաչ միածաղիկ
127.	P. orientale L. – Կակաչ արևելյան
	24.Plantaginaceae – Ջղախոտազգիներ
128.	Plantago atrata L. – Ջխաղոտ սևացող (Եզան լեզու)
129.	P. major - Ջղախոտ մեծ
	25.Poaceae - Հացազգիներ
130.	Bromus – Ցորնուկ
131.	Calamagrostis epigejos – Եղեգնախոտ ցածրած
132.	Festuca varia Haenke – Շյուղախոտ խայտաբղետ

133.	Nardus - Փայլասենի
134.	Poa nemoralis - Դաշտավլուկ կաղնուտային
135.	Phleum alpinum L. - Սիզախոտ ալպիական
	26. Polygalaceae - Կաթնախոտազգիներ
136.	Polygala alpicola Rupr.- Կաթնախոտ ալպիական
	27. Polygonaceae - Մատիտեղազգիներ
137.	Polygonum carneum C. Koch - Մատիտեղ մսագույն (Հովվի գավազան)
138.	P. officinalis - Մատիտեղ դեղատու
	28. Polypodiaceae - Բազմատոսիկազգիներ
139.	Dryopteris filix-max - Վահանապտեր արական
	29. Primulaceae - Գնարբուկազգիներ
140.	Primula macrocalyx Bge - Գնարբուկ խոշորաբաժակ
	30. Ranunculaceae - Գորտնուկազգիներ
141.	Aconitum sp - Ընծախոտ
142.	A. orientale - Ընծախոտ արևելյան
143.	Consolida orientalis schod - Դլինյակ արևելյան
144.	Pulsatilla albana - Քնախոտ ալբանական
145.	Ranunculus aragazi Crossh. - Գորտնուկ արագածի
146.	R. brachilobus Boiss. Et Hohen - Գորտնուկ կարճացողուն
147.	R. caucasicus Bieb. - Գորտնուկ կովկասյան
148.	R. sp. - Գորտնուկ
149.	R. oreophillus Bieb. - Գորտնուկ լեռնային
150.	Thalictrum minus - Գնձմնուկ փոքր
	31. Rosaceae - Վարդազգիներ
151.	Alchemilla grossheimii Juz. - Գայլաթաթ Գրոսհեյմիի
152.	A. sericae Willd. - Գայլաթաթ մետաքսյա
153.	Cotoneaster integerrima Medik. - Չմենի ամբողջատեր
154.	C. melanocarpa - Չմենի սևապտուղ
155.	Geum rivale - Մարեմխոտ գետային (շահոքրամ)
156.	Potentilla sp - Մատնունի
157.	P. orientalis - Մատնունի արևելյան
158.	P. reptans - Մատնունի սողացող
159.	Sanguisorba officinalis - Արունխամիկ դեղատու
	32. Saxifragaceae - Քարբեկազգիներ
160.	Saxifraga exarata Will. - Քարբեկ կոտրվող
	33. Scrophulariaceae - Խլածաղկավորներ
161.	Pedicularis condensate Bieb.- Ոջլաղեղ սեղմված
162.	P. sibthorpii Boiss. - Ոջլաղեղ հաստակնճիթ
163.	Rhinanthus minor - Աքլորաբբուկ փոքր
164.	Veronica gentianoides Vahl. - Բերենիկե բոզանման
165.	V. orientalis. - Բերենիկե արևելյան
166.	Verbasicum orientale - Խոնդատ արևելյան
	34. Thymelaeaceae - Գոճամազգիներ
167.	Daphne glomerata Lam. - Տերևատ լերկատերև
	35. Valerianaceae - Կատվախոտազգիներ
168.	Valeriana sp - Կատվախոտ
169.	V. officinalis - Կատվախոտ դեղատու

36. Urticaceae - Եղինջազգիներ

170. Urtika dioica L - Եղինջ երկտուն

«Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայր

Կատարվել է արգելավայրի տարածքից հավաքված հերբարիումների տեսակային կազմի ճշգրտում:

Ճշտվել են արգելավայրում աճող «Կարմիր գրքում» գրանցված *Gladiolus kotschyanus* Boiss - Թրաշուշան Կոչիի և Ճակնդեղ խոշորարմատ - *Beta macrorhiza* Stev. տեսակների, ինչպես նաև Հայաստանում էնդեմիկ տեսակներ *Grossheimia caroli-henrici* (Gabrielian et Dittr.) Gabrielian - Գրոսհեյմիա Կարլ-Հենրիի, *Pyrus daralagezi* Muik - Տանձենի դարեղեգեսի և *Pyrus gergerana* Gladkova - Տանձենի հերիեր աճելատեղերը: 2023 թվականի կատարած գիտարշավի ընթացքում հնարավոր չէր ամբողջ արգելավայրի տարածքում կատարել ուսումնասիրություններ, կախված ուղևորական իրավիճակներից:

«Ջիկատար» պետական արգելավայր

Արգելավայրի հարակից տարածքում իրականացվում են ամենօրյա մաքրման և տարածքի բարեկարգման աշխատանքներ: Այցելուների շենքի հարակից հատվածում տնկվել են Շուշանազգիների - *Liliaceae* ընտանիքին պատկանող մշտադալար թփեր՝ Արմավաշուշաններ- *Yucca*:

Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկ

Դենդրոպարկում կատարվում են խնամքի, մաքրման աշխատանքներ: Առատ ձյան շերտից թափ են տրվել մշտադալար ծառաթփատեսակների ճյուղերը և ազատել ձյան շերտից: Ապահովվել է ջերմատան բույսերի բնական խոնավությունը՝ ձյան շերտի միջոցով: Կատարվել է մշտադալար թփերի ձևավորման աշխատանքներ: Դենդրոպարկի տեսակային կազմի ավելացման նպատակով նախատեսվում է ձեռք բերել նոր տեսակի սերմեր:

«Իջևանի» դենդրոպարկ

2023 թվականի գիտարշավի ընթացքում կատարած մոնիթորինգի ընթացքում դիտարկվեց և գրանցվեց, որ Իջևանի դենդրոպարկում վերջին տարիներին չորացումների պատճառով դենդրոպարկի ծառաթփային տեսակային կազմը փոփոխության է ենթարկվել: Չորացել են հիմնականում խոնավասեր տեսակների ծառերը, տուժել են հատկապես մշտադալար տեսակները: 2023 թվականի գիտարշավի

ընթացքում հաշվառվել են հետևյալ չորացած տեսակները՝ Սեքվոյա մշտադալար - *Sequoia sempervirens*, Մետասեքվոյա գլիպտոստրոբուսանման - *Metasequoia gliptostroboides* Hu et Cheng., Տաքսոդիում սովորական - *Taxodium distichum*, Տաքսոդիում վերընթաց - *Taxodium ascendens*, Կրիպտոմերիա ճապոնական ձև էլեգանտ - *Cryptomeria japonica* f. *elegans* Masters., Կրիպտոմերիա ճապոնական ձև կանաչ - *Cryptomeria japonica* f. *viridis* A. Kolesn.:

Սաղարթավորներից չորացել են՝ Յերցիֆիլում ճապոնական - *Cercidiphyllum japonica* Side. et Zucc, Լիկվիդաբար - *Liquidambar*, Պայթակենի պարսկական - *Colutea persica* Boiss, Պայթակենի իստիրական - *Colutria istria* Mill., Ցանտոքսիլում այլանտանման - *Zanthoxylum ailanthoides* Siebold et Zucc., Ցանտոքսիլում պղպեղային - *Zanthoxylum piperitum* DC., Ունաբի - *Zizyphus* տեսակները, Ցեդրելա չինական - *Cedrela sinensis* Juss., Լիկվիդաբար - *Liquidambar*, Արոսենի հայաստանյան - *Sorbus hajastana*, Ստեֆանդրա տանակի - *Stefandra tanaka*, Աղտոր հոտավետ - *Rhus aromatic* Ait., Թխկի գեղեցիկ - *Acer pictum* Thunb., Արալ չինական - *Aralia chinensis* L., Բակհարիս թելուկատերև - *Baccharis halimifolia* L., Կարիա ջրային - *Carya aquatica* Michx. Nutt., Տրախիկարպուս Ֆորչունի - *Trachycarpus Fortunei* H. Wendi. և ծաղկող թփերի շատ տեսակներ:

Իրականացված մոնիթորինգի արդյունքներով և հավաքված նյութերի համադրմամբ «Իջևանի» դենդրոպարկի տարածքում նորից ճշտվել է չորացած ծառաթփատեսակները, որոնք դենդրոպարկի տարածքում այլևս գոյություն չունեն և հետևաբար տեսակային կազմի ցուցակից դուրս են բերվում:

Կենի հատապտղային ձև խայտաբղետ - *Taxus baccata* f. *alba-variegata* hort

Կենի հատապտղային ձև Դավաստոնի - *Taxus baccata* f. *Dovastonii* Laws.

Կենի գլխիկավոր Ֆորչունի - *Cephalotaxus drupacea* Sied et Zucc.

Տորրեյա խոշոր - *Torreya grandis* Fort.

Եղևին հունական - *Abies cephalonica* Loud

Եղևին կիլիկական - *Abies cilicica* Carr.

Եղևին ոլորված - *Abies recurvata* Mast.

Սոճի ոգնանման - *Pinus echinata* Mill

Սոճի լեռնային - *Pinus montana* Mill.

Թույրպսիս դուրանաման ձև խայտաբղետ - *Thujaopsis dolabrata* f. *variegata* Otto

Թույա արևմտյան ձև Ռիվերսի - *Thuja occidentalis* f. *Riversii* Beissn.

Թույա ծալքավոր ձև ոսկեգույն-խայտաբղետ - *Thuja plicata* f. *aureo-variegata* hort.

Մագնոլիա խոշորածաղիկ – *Magnolia grandiflora* L.
Մագնոլիա խոշարածաղիկ ձև նեղատերև – *Magnolia grandiflora* f. *angustifolia*
Մագնոլիա կորուս – *Magnolia Kobus* DC
Մագնոլիա շուշանածաղիկ – *Magnolia liliflora* Desr.
Մագնոլիա եռաթերթ – *Magnolia tripetala* L.
Շիզանդրա չինական Լիմոննիկ – *schizandra chinensis* Baill.
Լինդերա Բենզեի – *lindera Benzoe* L. BL.
Սորբարիա Լինդեյի – *sorbaria Lindleyana* Maxim.
Հորտենսյա խոշորատերև ձև ստերջ (ամուլ) – *hydragea macrophylla* f. *mutabilis* hort.
D.C.
Դազիֆորա թփանաման – *Dasiphora fruticosa* L. Rybd
Պիտոսպորում Տոբիրի – *Pittosporum Tobira* Dryand.
Բունդուկ երկտուն – *Gymnocladus dioicus* L.C.Koch
Ինդիգոֆերա Ժերարդի – *Indigofera Gerardiana* Baker.
Գրեյիա երկբլթականի – *Grewia biloba* G. Don.
Սեկուրինեգա կիսաթփային – *Securinega suffrticosa* Rehd.
Մոլատուս ճապոնական – *Mollatus japonicas* Muell. Arg. Thund.
Մելիա հավայական (դեղին ծառ) – *Melia azedarach* L.
Աղտոր հոտավետ – *Rhus aromatic* Ait.
Աղտոր աղվամազային – *Rhus typhina* L.
Պիստակենի իսկական – *Pistacia vera* L.
Ստաֆիլ կոլխիդական – *Staphyea colchica* Stev.
Թխկի գինալա – *Acer ginnala* Maxim.
Սղոցի կտրված – *Ilex crenata* Thund.
Սղոցի Պեռնի – *Ilex Pernyi* Franch.
Կլերոդենդրոն ֆարգեյի (քահանայաձագ ֆարգեյի) – *Clerodendron fargesii* Dode.
Արալիա չինական – *Aralia chinensis* L.
Բոնչի Սարժենտի – *Viburnum Sargentii* Koehne
Տիլենի լոմբարդական – *Corylus maxima* Mill.
Շագանակենի սովորական – *Castanea sativa* Mill.
Պազանիա մերկ – *Pasania glabra* Oerst.
Կարիա ծոպավոր – *Carya laciniosa* Michx. Loud.
Կարիա թավշապատ – *Carya villosa* Shneid.

Պտերոստիրաքս բրդոտ – *Pterostyrax hispida* Sied. et Zucc.

Հասմիկ ծաղկառատ – *Jasminum floridum* Bunge.

Բուդլեյա տերևափոփոխ – *Buddleia alternifolia* Maxim.

Բուդլեյա Լինդլեյի – *Buddleia Lindleyana* Fort.

Պերիպլոկա սովորական – *Periploca graeca* L.

Արբուտուս մանրապտուղ – *Arbutus andrachne* L.

Թեղի խցանային – *Ulmus suberosa* Moench.

Ջելկովա բոխատերև – *Zelkova carpinifolia* Pall. C.Koch.

Փոշնի միսիսիպյան – *Celtis mississippiensis* Bosc.

Հավաքված նյութերի հիման վրա ճշգրտվում է դենդրոպարկի տեսակային կազմը: 2023 թվականի գիտարշավի ընթացքում կատարած մոնիթորինգի աշխատանքների և դեռևս լրիվ չճշտված արդյունքներով դենդրոպարկի տեսակային կազմի ցուցակը վերանայվել և թարմացվել է, որը նախատեսվում է նորից ճշտել 2024 թվականին ճշգրիտ տեղեկատվություն հավաքագրելու արդյունքների հիման վրա:

«Բերդի Սորաններ» դենդրոպարկ

Դենդրոպարկում իրականացվել է տարածքի մաքրման աշխատանքներ: Ձյան տեղումներից հետո մշտադալար ծառերը և թփերը թափ են տրվել:

Գարանանային աշխատանքների արդյունքում դենդրոպարկում կատարվել են ծառուղիների մաքրում՝ տերևներից, ինչի արդյունքով առաջացած չոր բուսական մնացորդները դուրս են բերվել տարածքից: Կատարվել է ջրագծի վերանորոգում: Դենդրոպարկի տարածքում տեղադրվել են աթոռներ և սեղան, այցելուների հանգիստը ավելի լիարժեք դարձնելու նպատակով: Դենդրոպարկում տնկվել են՝ Լորենու-*Trila*, Բարդու- *Populus*, Հացենու - *Fraxinus*, Հոնի - *Cornus*, Եղևնու -*Picea* տնկիներ և Տոսախի – *Buxus* թփեր:

Վանաձորի «Ժ. Սարուխանյանի անվան» դենդրոպարկ

2023 թվականի կատարած գիտարշավի ընթացքում Վանաձորի «Ժ. Սարուխանյանի անվան» դենդրոպարկը գտնվում էր շատ լավ վիճակում, ծառաթփերի

տեսակային կազմը պահպանված էր: Ներմուծվել էին նոր տեսակներ՝ Եղևնի կանադական կամ սպիտակ ձև կոնիկա - Picea f. conica, Մետասեքվոյա գլիպտոստորբուսանման - Metasequoia gliptostorboides, Դրախտավարդ ծառանման - Hydrangea abrorescens L., Հացենի ամերիկյան - Fraxinus americana, Դեյջիա հիբրիդային - Deutzia hybrida, Դազիֆորա թփանման - Dasiphora fruticose: Դենդրոպարկի տեսակային կազմի ցուցակը ճշտվում է:

«Զրվեժ» անտառպարկ

«Զրվեժ» անտառպարկում ֆլորայի հետազոտում միջոցառումների շրջանակներում իրականացված աշխատանքների ընթացքում կատարվել է տեսակային կազմի ցուցակների ճշգրտում նախորդ տարում հավաքված նյութերի հիման վրա: Իրականացված մոնիթորինգի աշխատանքների ընթացքում պարզվել է, որ «Զրվեժ» անտառպարկում մշտադալար և գեղազարդիչ ծառերը ունեն հատուկ խնամքի, պարարտացման կարիք, որը առաջարկության ձևով ներկայացվել է համապատասխան աշխատանքներ կատարելու համար: Գիտության բաժնի աշխատակիցների կատարած ուսումնասիրությունների արդյունքում սյունածև թույաների մոտ արձանագրել ենք սնկային հիվանդություն, վարակի տարածումը կանխելու համար առաջարկվել է իրականացնել համապատասխան աշխատանքներ: Մեր կողմից իրականացված անտառպարկաթղզիական ուսումնասիրությունների ընթացքում պտղատու այգու տարածքում, հայտնաբերվել է վնասատուների և սնկային հիվանդությունների օջախներ, որի համար առաջարկել ենք կատարել պայքարի միջոցառումներ: «Զրվեժ» անտառպարկում իրականացվել է տարածքի մաքրման և խնամքի, էտի և ձևավորման աշխատանքներ: Գոյացած բուսական մնացորդները հավաքվել և դուրս են բերվել տարածքից:

Կատ.՝
Գիտական աշխատող՝
Էկոտուրիզմի մասնագետ - գիտական աշխատող՝



Հայարկի Գրիգորյան
Սոնա Վարազյան